021.4
Հ-60

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Ա. Ֆ. ՄԻԿՈՅԱՆԻՑԱՆ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԻԿՈՅԱՆԻՑԱՆ ԱՆՎԱՆ

„Համ(բ)Պ Պատմության Համառոտ Դասընթաց"-ի

ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅԱՆ 10-ԱՄԱՅԱԿԸ

(1938—1948)

1948
ՀՈԿՏԵՄԲԵՐ
1
ՈՒՐԲԱԹ

Տասը տարի է անցել այն օրվանից, երբ լույս տեսավ Ի. Վ. Ստալինի «Համ(բ) Պ Պատմության համառոտ դասընթացը»:

Լենինի մեծ գործի հանճարեղ շարունակողի այս աշխատությունը հանդիսանում է մի նոր, խոշոր գաղափարական-քաղաքական ավանդ մարքսիզմի գանձարանում: Նա մեր պարտիայի գիտական պատմությունն է, Մարքս-Լենինյան տեսության լավագույն հանրագիտարանը: Այս աշխատությունը բոլշևիկյան պարտիայի պատմության խորը գիտական բացատրություններով ու վերլուծություններով զինում է մեր պարտիայի անդամներին ու սովետական քաղաքացիներին Մարքս-Լենինյան տեսությամբ, հասարակական զարգացման և քաղաքական պայքարի օրենքների գիտությամբ, դառնալով մարքսիզմի պրոպագանդայի հզոր միջոց:

«Համ(բ)Պ Պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայումը բոլշևիկյան պարտիայի գաղափարական կյանքում հանդիսացավ խոշորագույն երևույթ: Նա մի հզոր խթան դարձավ մեր երկրում պարտիայի գաղափարական-քաղաքական կյանքի հուժկու բարձրացման գործում, նա դարձավ տասնյակ միլիոնավոր մարդկանց սեղանի գիրքը:

Իր էլուկրիներից մեկում ընկ. Ժդանովը նշում է, թե այն հանգամանքը, որ միլիոններն սկսեցին ուսումնասիրել Համ(բ)Պ պատմությունը՝ ներկայացնում է իրենից «մեր պարտիայի մեծագույն հաղթանակը»:

Մինչև «Համ(բ)Պ պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայումը մեր մարքսիստ պատմաբանների կողմից Մարքսիզմի և Լենինիզմի միջև ստեղծված էր վթասակար խզում: Լենինիզմն այն ժամանակ ամենից շատ էին որպես մարքսիզմից բոլորովին անջատ մի գիտություն, խզված դիալեկտիկական և պատմական մատերիալիզմից, խզված, նույնիսկ, պարտիայի պատմությունից, մոռանալով, որ Լենինիզմը ծագել և զարգացել է մարքսիզմի հիման վրա, որ մարքսիզմը լենինիզմի հիմքն է, որ չիմանալով Լենինիզմի այդ հիմքը, չի կարելի հասկանալ լենինիզմը:

«Համ(բ)Պ Պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայումը վերջ դրեց այդ վտանգավոր դրությանը: Այս դասընթացի լույս ընծայման կապակցությամբ 1939 թ. նոյեմբ. 14-ին կայացրած իր որոշման մեջ Համ(բ)Պ Կենտկոմն առանձնակի ուժով ընդգծեց, որ այս դասընթացի նպատակն է ցայտուն կերպով ցուցադրել Մարքս-Լենինյան թեորիայի ուժն ու նշանակությունը, ցույց տալ, որ այդ միասնական գիտությունը գիտականորեն պարզաբանում է հասարակության զարգացումը, սովորեցնում է կիրառել այդ օրենքները պրոլետարիատի ռևոլյուցիոն գործունեության մեջ: Համ(բ)Պ Կենտկոմի որոշումն ընդգծում է, որ Մարքսիզմ-Լենինիզմն այնպիսի մի տեսություն է, որը ինչպես և ամեն մի այլ գիտություն, անընդհատ զարգանում և կատարելագործվում է, որ նա երբեք չի վախենում առանձին հնացած դրույթներն ու եզրակացություններն փոխարինել նոր եզրակացություններով ու դրույթներով, որոնք համապատասխանում են պատմական պայմաններին:

«Համ(բ)Պ Պատմության համառոտ դասընթացը» ցույց է տալիս, թե ինչպես Մարքս-Լենինյան տեսական հշտարտացիությունը ստուգվել է պրոլետարիատի դասակարգային ռևոլյուցիոն պայքարի գործունեության փորձով, թե ինչպես այդ տեսությանը տրապատելն օգնել և օգնում է սովետական միլիոնավոր մարդկանց ապրել և աշխատել, պայքարել ու հաղթանակել և համարձակ ու վստահ առաջ գնալ կոմունիզմի ճանապարհով:

Այդ նշանակում է, որ բոլշևիկյան պարտիայի պատմական փորձը, այսինքն՝ ռևոլյուցիոն տեսությունը գիտենալը և ուսումնասիրելը զինում է մեր կադրերին ոչ միայն անցյալը լավ հասկանալու ունակությամբ, այլև ծառայում է որպես ժամանակակից հարցերը լուծելու ամենահուսալի ուղեցույցը, օգնում է տեսնել հեռուն և համականալ հետագա երևույթների և դեպքերի զարգացման տենդենցներն ու հեռանկարները:

Ռևոլյուցիոն տեսության նման հզոր նշանակությունը մենք գիտեն ենք մեր պարտիայի պրակտիկայում բազմաթիվ անգամ: Իսկ առանձնապես աչքի ընկավ այդ բանը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին:

Հայտնի է, որ Հայրենական պատերազմից առաջ էլ բոլշևիկյան պարտիան շարունակ զինում էր մեր ժողովրդին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով: Եվ երբ այդ ժողովուրդը հարկադրված եղավ դուրս գալ պաշտպանելու իր հայրենիքը ոտնատակում քշոնամուց, ապա մարտի դաշտում փաստորեն ընդհարվեցին ո՛չ միայն բանակներն ու զրահները, այլև (պիտի ասել, նույնիսկ, նախ և առաջ) ընդհարվեցին երկու միմյանց հշնամի գաղափարախոսություններ, երկու տարբեր իդեոլոգիաներ՝ Սովետական ժողովրդի առաջավոր, պրոգրեսիվ իդեոլոգիան— կոմունիզմի իդեոլոգիան, և հիտլերյան ստոր, ավազակային իդեոլոգիան— ռեակցիոն իմպերիալիզմի իդեոլոգիան:

Սովետական ժողովրդի հաղթանակի հնարավորության այդ պատերազմում շատերին քվում էր «հրաշք»:

Սակայն ով կարողացավ հասկանալ, որ բոլշևիկյան պարտիայի ամբողջ պատմությունը սովետական մասսաներին սոցիալիզմի և կոմունիզմի ոգով դաստիարակելու պատմությունն է, սովետական քաղաքացիներին Մարքսիզմի-Լենինիզմի սկզբունքներին անսահմանորեն նվիրվելու դաստիարակության պատմությունն է, Լենինի-Ստալինի գործին և իր սոցիալիստական հայրենիքին անձնվիրաբար ծառայելու ոգով կոփելու պատմությունն է,— նա կարող է հասկանալ, թե ինչի հնհանքը էր այդ հաղթանակը:

Այս աշխատության մեջ ընկ. Ստալինը հանճարեղորեն շարադրեց դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հիմունքները: Նա ամփոփեց այն բոլորը, ինչը Մարքսը, Էնգելսը և Լենինը ներքել էին դիալեկտիկական մեթոդի և մատերիալիստական մետրիայի մեջ և դիտության նոր տվյալների հիման վրա, մեր երկրի ու ամբողջ աշխարհի ռևոլյուցիոն շարժման փորձի հիման վրա ամփի զարգացրեց դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը:

Աշխատության այս մասում ընկ. Ստալինը ցույց տվեց Մարքս-Լենինիզմի փիլիսոփայության և բոլշևիկյան պարտիայի գործունեության միջև գոյություն ունեցող ներքին կապը, ցույց տվեց, թե ինչպես պետք է մարքսիստական դիալեկտիկական մեթոդի գրույթները կիրառել պատմության և հասարակական կյանքի ժամանակակից փնամի ու նրա զարգացման հեռանկարների ուսումնասիրման դեպքում: Այստեղ ընկ. Ստալինը նաև ամենայն մանրամասնությամբ է ցոլացնում է սոցիալիզմի հաղթանակի անխուսափելիությունը կապիտալիզմի նկատմամբ, այնքան, որքան հնի մահացումը և նորի զարգացումն ու բարձրացումը հանդիսանում է ընդհանուր զարգացման օրենքը:

Դասընթացում և առանձնապես նրա եզրակացիչ մասում ընկ. Ստալինը սպառիչ ճշտությամբ ձևակերպեց բոլշևիկյան պարտիայի կողմից անցած պատմական ուղու հիմնական արդյունքները, ցույց տվեց, թե ինչպիսի տվյալներ ունենալով պարտիան կարող է սոցիալիզմի համար մղվող պայքարում դեկավար դեր հանդիսանալ, ընդ որում նշեց, թե ինչ է հարկավոր պարտիային, որպեսզի իմպերիալիստական պատերազմի ու ազգ-սոցիալիստների կողմից ընդդեմ կոմունիզմի, այնուամենայնիվ, պատմության ընթացքը անխուսափելիորեն մերկացնում ու ետ է շպրտում բոլշևիզմի բոլոր տեսակի քաղաքական թեորիաները, հաստատում ու ապահովում է կոմունիստական իդեոլոգիայի, կոմունիստական հասարակարգի հաղթանակները:

Սովետական ժողովուրդը ձեռնարկել է հետպատերազմյան տասնհինգ հնգամյակի խոշոր խնդիրների կատարմանը: Այդ մեծ գործի նոր, թարմ պայմաններում մեր բոլոր կադրերի գաղափարական դաստիարակության դերն ու նշանակությունն առանձնապես մեծանում է: Այս բան առանձնակի ուժով ընդգծեց «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին Համ(բ)Պ կենտրոնական Կոմիտեի որոշումը:

Պալատի 18-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ ընկ. Մոլոտովը նշեց, որ Մարքս-Լենինյան ուսմունքը հասարակության զարգացման մասին, սոցիալիստական շինարարության զարգացման օրենքների մասին, կոմունիզմի հաղթանակի պայմանների մասին,— պատուիրե է բոլորի համար:

Առաջնորդ այդ ցուցումի կենսագործման բնագավառում չտեսնված խոշոր գեր է կատարում և պետք է կատարի «Համ(բ)Պ Պատմության համառոտ դասընթացը»: Նրա լույս ընծայման տասնհնգամյակին, ամփոփելով այդ հանճարեղ աշխատության կատարած խոշոր դերը, մեր գրադարաններն ու գրադարանավոր ֆրոնտի բոլոր աշխատողները պետք է ծավալեն ամենայայն, համաժողովրդական աշխատանք պատմության համառոտ դասընթացի շուրջը, գրադարաններին տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով մեծապես օժանդակեն ոչ միայն ընթերցողական լայն մասսաներին, այլև մեր բոլոր պարտիական կազմակերպություններին՝ է՛լ ավելի ծավալելու և կատարելության հասցնելու Մարքսիզմի-Լենինիզմի տեսության ուսումնասիրության աշխատանքները:

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ



Պարտիական պրոպագանդայի դեկավարի մասին «Համ(բ)Պ պատմության համառոտ դասընթացը» լույս ընծայելու կապակցությամբ Համ(բ)Պ ՆՆ օրգանում:

«Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի պատմության համառոտ դասընթացը» կարևորագույն մի իրոց է հանդիսանում բոլշևիզմի տիրապետելու, պարտիայի անդուլ ղեկավարը Մարքս-Լենինյան թեորիայով, այսինքն ճարտարական զարգացման ու բարգաման պայքարի օրենքների իմացությամբ զինելու խնդրի լուծման գործում, պարտիական եվ անպարտիական բոլշևիկների բարգական զգաստությունը բարձրացնելու միջոց, Մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի գործը հարկ եղած թռուցիական բարձրության հասցնելու միջոց:

Ստեղծելով «Համ(բ)Պ պատմության դասընթացը», Համ(բ)Պ Կենտկոմը իրեն խնդիր էր դնում՝ տալ Համ(բ)Պ Թեորիայի ու պատմության վերաբերյալ այնպիսի մի ձեռնարկ, որում իրեվ մեկ ամբողջության մի իասլորված լինեին Մարքս-լենինյան միասնական ուսմունքի արմնատականորեն բաժանված բաղկացուցիչ մասերը—դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմը եվ լենինիզմը, իսկ պատմական մատերիալիզմը կապված լիներ պարտիայի բաղաքականության հետ:

Ստեղծելով «Համ(բ)Պ պատմության դասընթացը», Համ(բ)Պ Կենտկոմը իրեն էր դնում՝ օգնել Թեորիական ու պրոպագանդիստական աշխատանք կատարող կադրերին վերակառուցելու, բարելավելու աշխատանքի որակը, սկսելու լիովին դաղիայի ենթարկել իրենց Թեորիական հետամնացությունը, վերացնելու իրենց իդեոլոգիական պատրաստության զործում եղած Թերությունները ու բացերը եվ պրոպագանդիստական աշխատանքը հասցնելու հարկ եղած բարձրության:

ԻՆՉ ԿԱՐԴԱԼ

1. Սպաիկ, Ի. Վ. *Բոլշևիկի պատմության մի քանի հարցերի մասին* (Նամակ „Пролетарская революция"-ի խմբագրությանը). Եր., Պետհրատ-Բաղ. գրակ. հրատ., 1940, 18 էջ:
2. Ընկեր Սպալինի նամակը Համ(բ)Պ պատմության կոմիսիային. «Համ(բ)Պ պատմության ուսումնասիրման շուրջը» («Պատմական գիտության ֆրոնտում» ժողովածուից). Եր., ուսուցիչների որակավորման ինստ-ի հրատ., 1938, էջ՝ 15—25):
3. Սպալին, Ի. Վ. *Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի պատմության համառոտ դասընթացը*. Եզրափակում. Եր., Հայպետհրատ, 1946. էջ՝ 483—496:
4. *Կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին «Համ(բ)Պ պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայման կապակցությամբ: Համ(բ)Պ Կենտկոմի որոշումը 1938 թ. 14 նոյեմբերի:* Եր., Պետհրատ-Բաղ. գրակ. հրատ. 1938, 30 էջ:
5. Ժդանով, Ա. Ա. *«Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին:* Եր. Հայպետհրատ. 1946, 35 էջ:
6. Մալենով, Մ. Ի. *Լենինի գաղափարը լուսավորում են կոմունիզմի ուղին:* (Ընկ. Մ. Ի. Մալենովի զեկուցումը Մոսկվայում Վ. Ի. Լենինի մահվան 24-րդ տարելդարձին նվիրված սգո հանդիսավոր նիստում, 1948 թվականի հունվարի 21-ին): «Պարտիական կյանք», 1948 թ. № 3, էջ՝ 8—22, «Մավետ. Հայաստան», 1948, հունվար 22 (№ 18), էջ՝ 2—3:
7. *Հայաստանի պարտիական կազմակերպություններում իդեոլոգիական աշխատանքն ուժեղացնելու միջոցառումների մասին: Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի որոշումը:* «Պարտիական կյանք». Եր., 1947, № 7, էջ՝ 35—45: «Մավետ. գրակ և արվեստ», Եր., 1948, № 1, էջ I—XII.
8. Նահապետ, Լ. *Մարքսիզմ-Լենինիզմի գաղափարների դանձարանը* («Համ(բ)Պ պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայման 9-ամյակի առթիվ): «Վաղ գարուն», Եր., 1947, հոկտեմբերի 4 (№ 82). էջ՝ 2:
9. Վարդապետյան, Ղ. *Տիրապետել Մարքս-Լենինյան Թեորիային:* «Մավետ. Հայաստան», Եր., 1947, հոկտեմբերի 8 (№ 236), էջ՝ 2:



«Պրավդա»-ն «Համ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց»-ի մասին

Համ(բ)Պ պատմությունը նորից ու նորից ցույց է տալիս զարգացման մեծ ուժը, Թեորիայի մեծ ուժը: Որպեսզի այդ ուժն ամբողջովին եվ բազմազանորեն, Լենինի-Ստալինի պարտիան կոչ է անում իր բարաթաշյուր անդամ ու թեկնածու անդամ բոլշևիկներին, կոչ է անում սովետական ինտելիգենցիայի կադրերին տիրապետելու մարքսիզմ-լենինիզմի Թեորիային, բարձրացնելու այն ոչ մեկ դոգմատիկ կերպով, այլ ստեղծագործաբար, եվ առաջ մղելու այն:

Ստեղծելով Համ(բ)Պ պատմության դասընթացը, պարտիայի Կենտրոնական Կոմիտեն, ընկեր Ստալինի գլխավորությամբ, մեծ ծառայություն մատուցեց ամբողջ Համաշխարհային կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի պատմության Թողնելով նոր, սրանչելի դիտական աշխատությամբ, որը հարատևության եվ անսպառ կենսունակության կնիքը կրում է իր վրա: Համ(բ)Պ պատմության դասընթացը հանդիսանում է մարքսիզմ-լենինիզմի Թեորիան Համաշխարհային կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի պատմության Նկատմամբ ունեցած ամենամեծ ձեռքբերումը: Նրա մեջ ամբողջությամբ եվ ստեղծագործաբար կիրառված է մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի գործն անշուշտ ամենամեծ ազդեցությունը կունենա մեր պարտիայի, սովետական պետության, այդ կարևագույն կոմունիզմի Նաղթանակը մեր երկրում, կարագացնի կապիտալիզմի անկումը եվ կոմունիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում:

Ջ Ր Ի

Վէ 04296, պատվեր 499, տիրաժ 1000

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 104

Խմբագիր Լ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

© National Library of Armenia OCR by Portmind